Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՔԱՐՈԶԸ ՍԻՐԻԱ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

(Դամասկոս, Ս. Սարգիս եկեղեցի, նոյեմբեր 15, 2009 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

«Դուք եք երկրի աղը. սակայն եթե
աղը անհամանա, ինչո՞վ այն կաղվի»
(Մատթ. Ե 13)

Սիրելի՛հավատացյալ զավակներ Մեր,

Առ Աստված փառաբանությունն է Մեր հոգում, որ այսօր Դամասկոսի Սուրբ Սարգիս եկեղեցու խնկաբույր կամարների ներքո միավորել ենք մեր աղոթքները՝ հանուն աշխարհում խաղաղության եւ ի մարդիկ հաճության: Մեր Տիրոջ Սուրբ Ծնունդը ավետող հրեշտակաձայն այս մաղթանքը նաեւ Սիրիո փարածքով հասավ Հայաստան: Պատմական բազմաթիվ հիշատակներով, փնտեսական ու մշակութային բազմաթել կապերով, քրիստոնեական կյանքի առնչություններով շաղկապված են Հայաստանն ու Սիրիան, որ քաղաքակրթության վաղնջական օրրաններից է:

Իրավամբ, Դամասկոսը սոսկ անուն կամ քաղաք չէ մեզ համար: Դամասկոսի ճանապարհին էր, որ մեր Տերը շլացուցիչ լույսի մեջ հանդիպեց Սավուղին եւ հարցրեց նրան. «Սավո՛ւղ, ինչո՞ւ ես հալածում Ինձ» (Գործք. Թ 4): Դամասկոսում էր, որ աղոթքով Սուրբ Անանիայի, ում սրբազան մասունքներն այնքան մեծ բարեպաշտությամբ պահվում են Երեւանի Սուրբ Աստվածածին (Սուրբ Ջորավոր) եկեղեցում, Տերը բացեց Սավուղի աչքերը եւ նրան դարձրեց Պողոս առաքյալ՝ մեր հավատքի մեծագույն քարոզիչ: Դրա համար Մենք եւս, իբրեւ Ամենայն Հայոց Հայրապետ, դեպի Դամասկոս Մեր ուղեւորությունն սկսեցինք Իջման Սուրբ Սեղանի առջեւ աղոթքով, որ բացյալ լինեն մեր բոլորի հոգեւոր աչքերը, որպեսզի մնանք մշտապես ճշմարտության, արդարության, սիրո եւ եղբայրության լույսի մեջ, եւ Քրիստոսի խոսքում նշված սրբազան աղով համեմվի մեր, բոլոր ազգերի եւ աշխարհի կյանքը:

Դամասկոսը մեր ժողովրդի կյանքում միշտ մնաց իբրեւ ուղի եւ ճանապարհ քրիստոնեական լույսի: Այստեղից անցան եւ այստեղ իջեւանեցին Հայաստանից ճամփա ընկած եւ դեպի Սուրբ Քաղաք՝ Երուսաղեմ գնացող ուխտավորական քարավանների բազմությունները: Այս եկեղեցին եւ նրա շրջակայքը դարձան «հոգետուն» ուխտավորների համար: Այս պատերը լուռ վկաներն են այն բոլոր աղոթքների, մաղթանքների եւ հույսի, որոնց առաջնորդությամբ հայ ուխտավորներ, հաղթահարելով ամեն դժվարություն, հասնում էին աստվածակոխ Սուրբ Քաղաք եւ

իրենց ուխտը կատարում Սուրբ Հարության տաճարում: Քրիստոսի Հարության եւ մեզ պարգեւած փրկության հույսն է լուսավորել փորձություններով լեցուն ուղին մեր ժողովրդի եւ առաջնորդել դեպի վերածնունդ: Աո Քրիստոս նույն ապավինությամբ պիտի շարունակենք ապրել, հավատալ ու կերտել մեր վաղվա օրը ու մեր ապագան ազգերի մեծ ընտանիքում:

Դամասկոսը նաեւ արաբական մեծ Հայրենիք հայ նկարեւորագույն կենտրոններից է, որտեղից հնչեց շեփորը անկախության եւ ազատագրական պայքարի: Ինչպես յուրաքանչյուր արաբ քաղաքացի, նույնպես եւ Ցեղասպանությունը վերապրած եւ այս հյուրընկալ երկրում ապաստանած հայորդիք ականջալուր եղան այդ կոչին: Գեներալ Կարամանուկյաններ, գնդապետ Պայրամյաններ, հարյուրապետներ, հիսնապետներ եւ տասնապետներ, ինչպես նաեւ շարքային զինվորներ հեռացան ֆրանսիական բանակի շարքերից եւ միացան բազմաթիվ այն կամավորներին, ովքեր համալրեցին Սիրիական ազատագրական բանակի զորամասերը: Ազատագրական պայքարի հաղթանակով ամրապնդվեց մեր երկու ժողովուրդների եղբայրությունը, եւ հաստատված անկեղծ, անշահախնդիր եւ անքակտելի բարեկամությունը առիթ տվեց մեր ժողովրդի բոլոր զավակներին մասնակցելու եւ նպաստելու իրենց համար Հայրենիք դարձած Սիրիայի վերելքին, բարգավաճմանն ու ծաղկումին: Սիրիան ժամանակի զերտերությունների համար անգամ դարձավ կարեւոր եւ անշրջանցելի պետություն եւ ներկայություն: Անշուշտ, այդ առաջընթացի մեջ իր ուրույն ներդրումը եւ անուրանալի վաստակը ունեցավ անմոռանալի եւ երանյալ ձեր հանգուցյալ նախագահը՝ Հաֆեզ Ալ-Ասադը, ում համար մեր հայ համայնքի բոլոր զավակները սիրո եւ գուրգուրանքի առարկա էին, որովհետեւ նա վստահ էր հայ համայնքի հայրենասիրությանը, նվիրումին եւ հավատարմությանը՝ հանդեպ Սիրիան եւ նրա բարեսեր ժողովուրդը: Ուրախ ենք, որ մեծանուն Հաֆեզ Ալ-Ասադի մեծանուն որդին՝ ձեր ներկա նախագահը՝ Նորին Վսեմություն Բաշար Ալ-Ասադը, հերոսական նույն ճանապարհն է որդեգրել իր ժողովրդի առաջնորդության եւ ծառայության համար, որը հաջողությունների, ձեռքբերումների ու հաղթանակների նույն արգասիքներն է պարգեւում Սիրիայի մեր եղբայրների եւ քույրերի երջանկալից կյանքի եւ պայծառ ապագայի համար: Մեր սիրտը միշտ բերկրանքով է լցվում, երբ Հայաստանի անկախացումից հետո տեսնում ենք, որ օրեցօր առավել սերտանում են հարաբերությունները մեր երկու պետությունների եւ եղբայր ժողովուրդների միջեւ, եւ Հայաստան այցելող պետական բարձր պաշտոնյաներից գովեստներ ենք լսում հավատավոր մեր զավակներիդ բարի ընթացքի ու կյանքի մասին:

Այս զգացումներով եւ խոհերով Մեր սրտի պարտքն ենք համարում մեկ անգամ եւս Մեր խորագգաց շնորհակալություններն ու գնահատանքը հայտնել Սիրիայի Արաբական Հանրապետության նախագահ Բաշար Ալ-Ասադին՝ իր ազնիվ հրավերի համար՝ այցելելու Սիրիո հնագույն երկիրը, հանդիպելու իր հետ, իր ատվածասեր, բարի եւ ազնիվ ժողովրդին: Մենք չենք մոռանա, որ Սիրիայի արաբ ժողովուրդը իր հացն ու Հայրենիքը կիսեց ահավոր Դեր Զորը վերապրած մեր ժողովրդի մնացորդացի հետ: Հիմա Դեր Զորը դարձել է ուխտատեղի եւ խորհրդանիշ մեր

ժողովուրդների եղբայրության եւ բարեկամության, որովհետեւ այնտեղ թափված հայորդյաց արյանը միախառնված է նաեւ մեր արաբ եղբայրների արյունը: Դեր Զորի եւ Սիրիայի ամբողջ տարածքում հեղված հայ եւ արաբ եղբայրների արյունն ու քրտինքը խորհրդանիշ դարձան մեր եղբայրության եւ սիրո ու այդպես էլ պիտի մնան միշտ եւ հավիտյան: Ահա այս է այն խորհրդանշական աղը, որի մասին խոսում է մեզ համար խաչը բարձրացած եւ Իր արյունը հեղած մեր Տերը: Աղը սակավ լինելով՝ համեմում է զանգվածները: Քրիստոսի հանդեպ մեր հավատքի լույսն է վերածվում աղի՝ կյանքը համեմելու միմյանց հանդեպ սիրով, համեմելու ազգերի եւ ժողովուրդների համեղբայրությունն ու համագործակցությունը: Մեկ եւ նույն Աստծո զավակները լինելու գիտակցությամբ ու հավատքով կարող են խաղաղ կարգավորումներ գտնել կուտակված խնդիրները մեր բազմազգ եւ երեք կրոնների օրրանը հանդիսացող տարածաշրջանում:

Սիրելի՛հավատավոր հայորդիներ, դուք քաղաքացիներն ու բնակիչներն եք այն քաղաքի, որի նշանակության եւ կարեւորության մասին մեր խոհերը փորձեցինք կիսել ձեզ հետ: Դուք հավատարիմ եք Քրիստոսի ճշմարիտ լույսին, որ ճառագեց Դամասկոսի ճանապարհին, որն իջավ մեր նվիրական սրբօրրանի՝ Սուրբ Էջմիածնի տեղում եւ հաստատեց հայոց հոգեւոր կյանքի Մայր Աթոռը: Սուրբ Էջմիածինը երկնառաք պարգեւ է մեր ժողովրդին, հոգու ծննդավայրն ու հոգեւոր հայրենիքը հայության: Սուրբ Էջմիածինը Քրիստոսահիմն մեր ուխտավայրն է, համերաշխության եւ միության խարիսխը մեր ժողովրդի: Սուրբ Էջմիածինը հայ կյանքի աղն է, որի համն այլ տեղ կարելի չէ գտնել: Նրա նվիրական խորհրդով հայ հոգին միշտ տեսնելու է ազատ իր երկրում երկնքից իջնող Քրիստոսին՝ մեր Տիրոջն ու Փրկչին: Մեզ քաջ հայտնի է ձեր հավատարմությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նկատմամբ: Եկանք Հայաստանից եւ Սուրբ Էջմիածնից, որոնց հանդեպ որդիական սերը գտանք ձեր աչքերի մեջ, հավատավոր ձեր հոգիներում: Ուրախ եւ քաջալեր ենք ձեզանով, որ հաստատուն ձեր հայրերի ավանդներին՝ շեն ու պայծառ եք պահում հոգեւոր եւ ազգային ձեր կյանքը, կրթում ձեր զավակներին հավատքով եւ հայ ինքնությամբ, մեր ժողովրդի արդար իրավունքները պաշտպանելու նախանձախնդրությամբ: Ցեղասպանությունը տարագիր դարձրեց մեր ժողովրդին, բայց ոչինչ չի կարող հայրենազրկել հայության հոգին: Մեր ժողովրդի հոգում են աղոթքից, շարականից զրկված մեր վանքերն ու եկեղեցիները, քանդված սրբատեղիները, իրենց տերերից զրկված, թալանված մեր շեներն ու քաղաքները, մեր բյուրավոր նահատակները: Արդարության հավատով իր կորուստների ցավը մեր ժողովուրդը զորության փոխեց ու այսօր վերածնված՝ Եւրոպայից Ասիա, Հյուսիսային եւ Հարավային Ամերիկայից Աֆրիկա եւ Ավստրալիա ապրում է հայացքն Արարատին եւ նորանկախ իր Հայրենիքին, ապրում է հայրենյաց սիրով ու իր նոր կյանքի հույսերով: Հանուն արդարության, մարդասիրության ու խաղաղության, հանուն մեր հայրերի, մեր որդիների, հանուն մեր գալիքի՝ հետեւողականորեն ու աննահանջ, Հայրենի պետության շուրջ համախումբ՝ հետամուտ պիտի լինենք հայոց Ցեղասպանության համընդհանուր ճանաչմանն ու դատապարտմանը,

Արցախի մեր ժողովրդի ազատ ապրելու իրավունքի հաղթանակին, ազգային մեր արդար Դատին: Մեր պատգամն ու հորդորն է, սիրելինե՛ր, որ անխախտ եւ անմար պահեք ձեր հոգում նախնյաց ավանդները եւ ձեր սրտերում միշտ վառ ձեր սերը Հայրենիքի եւ Սուրբ Էջմիածնի հանդեպ: Շարունակե՛ք ձեր կյանքի հավատավոր ընթացքն ապրվածսիրությամբ, եկեղեցասիրությամբ եւ հայրենասիրությամբ:

Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում Ձեզ, սիրելի՛ Սրբազան, եւ եկեղեցական բարեջան սպասավորներին, Գավառական ժողովի, Ազգային միությունների ու հաստատությունների պատվարժան անդամներին, որ ուխտապահ հոգով ծառայում եք մեր ժողովրդին, որպեսզի անսասան մնա հավատքի եւ հույսի մեջ, հաստատուն՝ ապրվածասեր ու հայրենասեր ուղիներում: Մեր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում մեծազնիվ բարերարներին, ովքեր հավատավոր հոգով իրենց վաստակն են բերում Դամասկոսի թեմի կյանքին եւ որդիական նվիրումով աջակից են նաեւ Մայր Աթոռի առաքելությանը: Ուրախ ենք հիշելու, որ «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի նախագահ տիար Գաբրիել Ջեմբերջին իր բարերարությունների շարքում դպրոցին կից անավարտ սրահի կառուցումը հովանավորելու համար վերջերս արժանացավ մեր Եկեղեցու բարձրագույն՝ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ շքանշանի: Մեր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում հարազատ ու հավատարիմ զավակներիդ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու, որ խնամք եք տանում, ջանքեր բերում հոգեւոր եւ ազգային հաստատությունների պայծառությանը, կրթում ձեր զավակներին հավատքով, հայրենասիրությամբ եւ ազգասիրությամբ: Մենք եղանք դպրոցներում, ազգային հաստատություններում եւ վերստին փառք ենք մատուցում Աստծուն, որ մեր ժողովրդի զավակները ապրում են խաղաղ ու ապահով, իրենց հոգեւոր եւ ազգային կյանքով: Հաջողություններ ենք մաղթում Ձեզ եկեղեցասեր ու ազգանվեր Ձեր բոլոր գործերում: Մնացե՛ք համախումբ Սուրբ Էջմիածնի շուրջ, միմյանց հանդեպ սիրով, զորացե՛ք հավատքով, «... առե՛ք Աստծո սպառազինությունը, հաստատուն կացեք տեղում պինդ կանգնած, ձեր մեջքերը գոտեպնդած ճշմարտությամբ եւ հագած արդարության զրահը՝ ձեր ոտքերը ամրացրե՛ք խաղաղության Ավետարանի պատրաստությամբ» (Եփես. Զ 13-15), եւ «ամեն ժամ ավելի՛ն եղեք Տիրոջ գործի մեջ, իմացե՛ք, որ ձեր վաստակը իզուր չէ Տիրոջ առաջ» (Ա Կորնթ. ԺԵ 58):

Այսօր միասնաբար մեր հայցը բարձրացնենք երկինք, որ Ամենակալն Աստված շենության ու բարօրության մեջ պահպանի Սիրիայի Արաբական Հանրապետությունը, զործոց հարանոր հաջողություններ շնորհի Սիրիայի հարգարժան նախագահին եւ պետական այրերին: Այլեւ հայցում ենք, որ Տերը հաստատուն ու պայծառ պահի Դամասկոսի հայոց թեմը եւ զորավիգ լինի ձեզ, որպեսզի հաջողությամբ ու բարի արդյունքներով պսակեք ձեր բոլոր եկեղեցաշեն ու ազգանվեր գործերը:

Եւ թող մեր Տիրոջ խաղաղությունն ու շնորհը լինեն մեզ հետ եւ բոլորի՝ այսօր եւ միշտ. Ամեն: